Ցոլակով յար ջան արի

Ցոլակով յար ջան արի,
Արի, պարիս հարմարի,
Ցոլակով յար ջան արի,
Արի, պարիս հարմարի:

Էկել են ու տանում են,
Ցոլակով յար ջան արի,
Ջոկել են ու տանում են,
Արի, պարիս հարմարի:

Գիշեր եմ քուն եմ մտե,
Ցոլակով յար ջան արի,
Քեզ երազումըս գտե,
Արի, պարիս հարմարի:

Լուսնակը պահ է մտե,
Ցոլակով յար ջան արի,
Անուշ յարս չեմ գտե:
Արի, պարիս հարմարի:

Տանս տակը կա նռնի,
Ցոլակով յար ջան արի,
Ես բարձ բերեմ, դու կռնի,
Արի, պարիս հարմարի:

Ես, դու մի բաղում պիտենք,
Ցոլակով յար ջան արի,
Դու չինարի, ես՝ նռնի,
Արի, պարիս հարմարի:

Ճերմակեց գետին ձնից,
Ցոլակով յար ջան արի,

Աղջի, դուս արի տընից,
Արի, պարիս հարմարի: